ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Երևանի Ա. Չեխովի անվան հ. 55 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ «Մաթեմատիկա» (15 դասաժամ), «Տեխնոլոգիա» (24 դասաժամ), «Ինֆորմատիկա» (26 դասաժամ), «Ֆիզկուլտուրա» (24 դասաժամ), «Չինարեն» (22 դասաժամ) առարկաների ուսուցիչների թափուր տեղերի համար:
Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

1.Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (ձև 1) մեկ լուսանկար 3X4 չափի
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)
- անձը հաստատող փաստաթուղթ
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)
- ինքնակենսագրություն (Ձև 5)
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում ՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:

Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերցնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են մինչև ս/թ օգոստոսի 30-ը ներառյալ:

Մրցույթը տեղի կունենա Երևանի Ա. Չեխովի անվան հ. 55 հիմնական դպրոցում՝ սեպտեմբերի 2-ին՝ ժամը 15:00-ին:

Հասցե՝ ք. Երևան, Բաղրամյան պողոտա,16, հեռ.՝ 010 526422, 010 560600: